ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **09.08.2016թ** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Գ.Գյոզալյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Կ.Իսախանյան ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Ռ.Աբրահամյան ՀՀ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության պետ
Դ.Վեքիլյան ՀՀ Արագածոտնի մարզի դատախազ
Ռ.Կիրակոսյան ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ
Մ. Աբգարյան մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ա.Ռոստոմյան ՀՀ ՏԿԶՆ տարածքային կառավարման վարչության պետ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

09.08.2016թ.

ժ. 11.00

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. Գյուղատնտեսական աշխատանքների, բերքահավաքի կազմակերպման աշխատանքների մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյան/:

3. Մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված և արձանագրված թերությունների և խախտումների վերացման մասին: հմայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների կողմից ամենամյա արձակուրդներից օգտվելու ընթացքի և արձակուրդների ձևակերպման մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյան/:

4. Մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերի օգտագործման վիճակի մասին /Զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ռ. Մուրադյան/:

5. Հայտարարություններ

Օգոստոսի 9-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի հերթական նիստը: Օրակարգային հարցերին համապատասխան, համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշերի, հողի հարկի և գույքահարկի շտեմարանների հետ տարվող աշխատանքների, հողի վարձավճարի և գույքի վարձավճարի գծով խոշոր պարտավորություններ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին զեկույցով հանդես եկավ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանը:

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյանը, անդրադառնալով մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված և արձանագրված թերություններին և խախտումներին, համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարմանը: Մասնավորապես, բյուջեի կատարման վերաբերյալ հարցերը քննարկել համայնքի խորհրդակցական մարմինների հետ,պահպանել գործավարության կանոնները, ձեռնարկել միջոցներ համայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների կողմից ամենամյա արձակուրդներից օգտվելու ընթացքի և արձակուրդների ձևակերպման խնդիրներին լուծումներ տալու ուղղությամբ:

Մարզխորհրդի նիստում քննարկված հաջորդ հարցը վերաբերում էր գյուղատնտեսական աշխատանքների, բերքահավաքի կազմակերպման աշխատանքներին, արձանագրված կարկտահարություններին և դրա հետևանքների վերացման խնդիրներին: Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը տեղեկացրեց, որ մեծապես վնասվել են խաղողի և այլ պտղատու այգիները,հացահատիկի մոտ **50%**-ը և, որ կարկտահարության հետևանքով մարզի կրած վնասը կազմում է **7,1մլրդ** ՀՀ դրամ: Անդրադառնալով պարարտանյութի, դիզելային վառելիքի, սերմացուների դիմաց կուտակված պարտքերի մարման գործընթացին, Յու. Ազատյանը նշեց, որ գումարների հավաքագրումը հարկավոր է ավարտին հասցնել մինչև օգոստոսի 31-ը:

Մարզպետի խորհրդական Ռաֆիկ Մուրադյանը ներկայացրեց մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերի օգտագործման վիճակի մասին և նշեց, որ համայնքներում ստուգումներից հետո հրավիրվել են տարածքային խորհրդակցություններ,քննարկվել խնդիրները: Ռաֆիկ Մուրադյանը համայնքի ղեկավարների ուշադրությունը հրավիրեց պայմանագրերում առկա թերություններին և վճարումներին :

Հնչեցին հարցեր համայնքներում իրականացվող ծրագրերի և գնումների մասին օրենքի վերաբերյալ:

Օրակարգի հարցերից հետո ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ.Իսախանյանը, ամփոփելով ելույթները , մեկ անգամ ևս հորդորեց ուշադրության կենտրոնում պահել հարկերի հավաքագրման գործընթացը և նշեց, որ կարկտահարությունից առաջացած վնասների փոխհատուցման հարցը քննարկվում է նախարարի հետ և շուտով գյուղացիական տնտեսություններին հնարավորինս կցուցաբերվի անհրաժեշտ աջակցություն: Կ.Իսախանյանը նշեց, որ մարզի աշխատանքները առաջին կիսամյակի ընթացքում գնահատվել են լավ:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գաբրիել Գյոզալյանը: Նա շնորհակալություն հայտնեց այն համայնքի ղեկավարներին ,որոնց սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշերը կազմում են 100 %: Գաբրիել Գյոզալյանը ևս մեկ անգամ անդրադարձավ կարկտահարության պատճառած վնասներին և նշեց ,որ օպերատիվ աշխատանքների շնորհիվ կարճ ժամանակում ճշտվել և վնասների չափը ներկայացվել է կառավարությանը:

Գ.ԳՅՈՉԱԼՅԱՆ